



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՄԱՊՈՏ

ՁԵՌՆԱՐԿ ԴԱՂԿԱՀԱՏՈՒԹԵԱՆ

ԿԱՄ

ԺԱՂԿԻ ՊԱՏՈՒՅԱԾՄԱՆ



ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ


Անուածածուր պարկ. Ավագագեանց



614. 4
Ա - 31

Թ. ի ք լ ի զ

Ա. Մ. Շարամբէի եւ Հոկ., Նիկ. 21.
1901



610
4-ԱՆ

15 NOV 2011
1000

ՀԱՄԱՐԾՈՑ


ՁԵՐՆԱՐԿ ԴԱՂԿԱՏԱՏՈՒԹԵԱՆ

614:4
Q-3131

ԿԱՄ

ԿՐ ԺԱՂԿԻ ՊԱՏՈՒԱԾՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱՆ ԽՈՎԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱՆ ԽՈՎԱԿԱՆ



Ա. ԽԱՆԱԳԻՐԵԱ

Անուանական սարկ. Ալիսազեանց



Թ. Ի. Ք. Ի. Պ.

Տպարան Մ. Շարամբէի եւ Հնկ., Նիկ. 21.

1901

3792

4 FEB 2013

СОФИЯ >

МЕДАЛІОНІЙЧИКІВСЬ

ЧІРІ

ОПИШІНІАДР АРРОБ

Дозволено цензурою, Тифлісъ, 24-го Января 1901 года.

2 0 4

Ինձ համար բարոյական պարտաւորութիւն եմ համարում այս փոքրիկ աշխատութիւնս ձօնել ՄԵծապատիւ պ. ԱԹԱՆԱԳԻՆԵ ԳԱՅՐԻԻԼԵԱՆ ՄԵԼՔՈՒՄԵԱՆԻ անուանը՝ ինչպէս իմ կողմից երախտագիտութեան մի փոքրիկ նշան նորա այն սիրալիք աշխատութեան եւ ծրիապէս ինձ նուիրած ժամերի, որը նա գործ է դրել ծաղկահատութիւնը ինձ տեսականապէս եւ գործնականապէս ուսուցանելիս:

Աշխատասիրողը

Ապահարս մաքարդար զանոն նմի
Հա թիղցոփ ուր Նորանու՞ և մայիսաց
ԱՅԱ. լու վառաշաբաթ Այ մեծ ուսի մասսայի
Այ Այությու ՄԵՎԵՎԵՎԵՎԵՎ Ամ ՓՈՒԽ
Առափայթ ըմբեր նի ս Երանի զմառան և մ
միս աղամ մազմ թիղցոփ մի մատկուածք
նմի ս Երադիյն ու մատկուանիչա զմային
յեզ և նյար ամ ցցո պատու նորդամ
ս Երամաթանձու նմի զմայիստաւայրած
ամյամնուաս ս Երամայիստնուր ու

պրուժառառուում

ՅԱՐԱՋԱԲԱՆ

Քանի որ մեր հայ ժողովրդի մէջ, մա-
նաւանդ զիւղերում, փոքրահասակ երեխաներ
ծաղիկ ընկած ժամանակ շատ զոհեր են տա-
լիս և շատ մահացումն է լինում.—ուստի կա-
րեւոր է, որ մեր ժողովրդի մէջ ծաղկահատու-
թեան օգտակարութեան միտքը տարածուի և
պահանջ դառնայ: Նաւազոյն կը լինի, եթէ
մեր հոգեոր միջնակարգ դպրոցներում—զէթ-
վերջին դասարանի սաներին ծաղկահատու-
թեան հետ ծանօթացնեն տեսական և փորձ-
նական ձևով, որպէս զի աւարտող սաները,
քահանայ դառնալով և ժողովրդի մէջ տարա-
ծուելով տարածեն և ծաղկահատութեան օգ-
տակարութեան միտքը և զործնականապէս
նպաստեն ու այդպիսով կարողանան մահից
փրկել բազմաթիւ երեխաներ:

Հենց այդ նպատակին ծառայելու համար
և մեր ովտանն օգտակար լինելու նպատակով՝
վստահացանք այս փոքրիկ գրքովէ նուիրել
մեր աղջին։

Це варто згадати, що відомий лікар Франції Альберт Генріх Гартман (Albert Heinrich Hartmann) у своїх «Лекціях з практики лікування» (Lectures on the Practice of Medicine), виданих в Парижі в 1844 році, писав: «Ми не можемо не згадати про те, що вже в 1673 році відомий лікар і фармацевт Микола Іванович Щенснович (M. Iwanowitsch Schenck) відкрив, що відвар чорнобурого корня може викликати зупадання в кому, якщо вживати його в великих дозах».

Ասու սարկ. Ալխազեանց
ոմանակաց բառաշաբաթը և այլ բառակաց
առա մեջ դժուր առց բառական համեց վրան
այլ հաւառ— Եւսի Ն մատուցան առց և սի
-բառաշաբաթ չեն վրանորու դեն որ ու դանց
և պատճեալու զգացի մամեց ապահովոր համեց
Անձ Ամէի ցի մերուալ պատճառք չհաշար
Ուր Հայոց մասուր բառականի դաշրու դեն
-բառաշաբաթ միջմաս դանցաւոր մէջու մի
-նդու և մատճակ ու Բանու ու մամեց
-դանցաւոր բառական զի սպասի քած մատճակ
-ապահով չեն վրանորու և խոյնեար պատճառք
-որ մամեց առաշաբաթ և մատճառք Խոյն ու
սպասի մատճարուայ խոյնեարը ու մատճարը
ըմբան մատճարուայ խոյնեարը ու մատճարը
-ու դանակաց միջմաս զմիջի
զանց այլ բառական միջմասար չին ու միջի
Խոյնեար այլ միջմաս զանցար մատճան դեն և
մատճառք զի այլ միջմաս ու մատճառք չին

ան բառան զմա մուժից ըստ այս ելուսահ
չունելու գչ նաև այսուհետ խօսնոց ցըմայ
նորմա մշակն ուն ամուսնու և այսու³
ծաղկաճատութեան անհրաժեշտութիւնը.

Նատ առաջ, հէնց որ երկում էր իս-
կական ծաղիկը, անպէս էր վախենում
նրանից մեր գիւղական ժողովուրդը, ինչ-
պէս խօլերալից: Եւ ճիշտ որ խօլերալի
երկիւզ էր տարածել ծաղիկը ժողովորդի
վրայ, որովհեաւ ահագին զոհեր էր տա-
նում, մի քանիսին կուրացնում էր, միւս-
ներին ալլանդակում: Պէտք էր տեսնել
ինչպէս գեղեցիկ սիրուն երեխան ալլան-
դակում էր, չէչոտում կամ կուրանում
չը պատուաստուելուց: Ո՞վ էր այս բոլոր
վնասների պատճառը, — ծաղիկը, ինձ կա-
սեն. իսկ ես կասեմ, որ իւրեանք ծնօդ-
ներն են պատճառը, որովհետեւ նրանք
խուսափել և այժմս էլ խուսափում են
ծաղկահատութիւնից:

Մայրեր, մայրեր օգտուեցէք ծաւկա-

Հատութիւնից, որովհետեւ ձեր մատաղ սերունդը որոնցով ուրախանում էք ալժմս,
կարող է լացացնել ձեզ, մինչեւ անգամ
անիծել ու հայհոյանքներ թափել ձեզ
վրայ։ Շտապեցէք երեխայ ժամանակից
ծաղիկ կտրել տալ ձեր երեխաներին, եթէ
չէք ուզում որ նրանք անիծեն ու նախա-
տեն ձեզ ձեր տգիտութեան համար։
Անցեալ տարի տօնուեց ծաղկահատու-
թեան գիւտի հարիւրամեայ տարեդարձը
և ալդ հարիւր տարուայ միջոցում շատ
քիչ է օգտուել մեր գիւղական ժողովուր-
դը, շատ քիչ։

Ասուածատուր սարկաւագ Ալսագեանց.
Դայոց սկս ով ի՞ն ով այն առաջարկուած ով
առ հայ ցըկութ - ով առաջարկ միամստի
րութ ցմանց ով Նեմով ու լիով ան
ցմայի առաջնորդ ով առաջարկ մե մզմն
ով ներփառութ ով սենելու և չմիասնութ
ով մայիսի ով դիմումադրան
ու առ առ գնդարար դմում ով մայիս ով

z u s u n o - s

ФЕРНОИДЫ БОД (907)

ԶԵՐՆԵՐԻ ԾԱՂԿՇԱՏԱԿՐԹԵԱՆ ԿԱՄ ԾԵՂԿԻ ՊԵ-
ՏՈՒԾՈՒՄՆԵՐՆ *)

ԱԽԱԶԻՆ ՊԱՏՈՒԱՍՈՒՄՆ (Վակցինացիա)

Պարագայք ծաղկահատութեան համար.

Ծաղկահատութեան պարագաները հետևեալներն են՝ 1. Պէտք է վերցնել մի բաժակ եռ եկած մաքուր ջուր, մէջն ածել մի թէփի գդալ «Ոսկեբարական թըլթուտ — բորնայակիսլատա» (борная кис-

^{*)} Այս օգտակար մասնագիտութեան հնարյողն է անգղիացի բժիշկ Լոդուարդ Ջէնները, որը ծնուել է անգղիացի Գլոչեստերի կոմսութեան Բերկլէյ գիւղում մայիսի 17-ին 1749 թուին և վախճանուել է 1823 թուին 74 տարեկան հասակում։ Այս օգտակար մասնագիտութիւնը նա հնարել է և առաջին անգամ

пата 1) և խառնել այնքան մինչեւ որ
պարզուի և ստացուի մաքուր, գտուած
ախտահանութան — դիզենֆեկցիոննի (дезин-
ֆекционная вода) ջուր:

2. —Մի աման ծաղկահեթը սծելու
համար, լատակը խորնընկած պղտիկ ա-
ղամանի չափ:

3. —Մաքուր, գտուած իշտաւաչափ է կան
— գիկրոսկոպիչեսկի (гикроскопичес-
ская вата)²⁾ բամբակ:

4. —Ծաղկահատութեան վերջին տե-
սակի գործիքը նշտարը — (ланцетъ), որը
բաղկացած է երկու մասից էրեխ և «աւշիչ»
կոթը շինուած է լինում փալտից կամ

պատուաստել կովի ծաղկահիւթով մայիսի 14-ին
1796 թուին Զօն Փիակս ութ աարեկան տղայի
թեկի վրայ: Զէնների այս օգտակար գիւտը հրա-
տարակուեց պաշտօնալէս 1799 թուին: Դոր-
տոր Զէնների կենսագրութիւնը և պատմու-
թիւն ծաղկահատութեան կարելի է գտնել հայե-
րէն լիդուալ Տիկ. Մարդաբիտի «ծաղկ. ճն.
դոկտ. Զէն»: գրքոյկում և այլն:

1). 2). Բորնայա կիսլատա և գիկրոսկոպի-
չեսկի բամբակ պէտք է հարցնել գեղատներում:

փղոսկրեց, գանագան երկայնութեամբ։
Դորա մի ծայրի վրայ ամքացըս է լինում
ասեղը, որի ծայրը վերջանում է նշտարի
նման, եռանկիւնով։ Այդ եռանկիւնու ծայ-
րը սուր է և բարակ ապա զէպի կոթի
կողմը լայնանում է եռանկիւնաձև և վեր-
ջաւորութիւնը բարականում, որը և ամ-
բացըած է լինում կոթի վրայ։ Այդ եռան-
կիւնու մի երեսը տափակ է և վրան եր-
կարութեամբ ակօս ունի. իսկ միւս երե-
սը փոքր ինչ կորընթարթէ։ Ասեղը պա-
հելու համար՝ գործիքի կոթը բուն ունի,
որը պտուտակով կէս է լինում, որի մէջ
է պահում և ասեղը։

5. — Թարմ ծաղկահիւթը՝ ստացուած
հորթից։

Ծանօթութիւն. Ա. Ծաղկահիւթը ա-
ծած կը լինի փոքրիկ ապակեայ խողովա-
կաձև շիշերում, որի երկու ծալը երն էլ
զմուռով փակուած է լինում, որպէս զի-
դըսի օդը չըմտնի շիշերը և չըփչացնէ
ծաղկահիւթը։ Բ. Ծաղկահիւթով լի շի-

շերը պէտք է պահուի մաքուր, չոր նը-
կուղներում (պագվալներում) բամբակում
փաթ սթած և արկղում դարսած։ Գ. Ծալ-
կահիւթը կը պահուի 5—6 տմիս, եթէ
նկուղների օդը հաւասարէ Ռէօմիւրի 0°ին։
Գ. Գործիքը միշտ մաքուր պէտք է պա-
հուի, չը պէտք է ունենայ ո՛չ մի կեղ-
տոտութիւն և նախ քան պատուաստելլ,
անդահանական ջրով պէտք է մաքրուի
գործիքը։ Ե. Պատուաստուղը նախ քան
պատուաստելլ պէտք է լողանայ կամ ե-
թէ երեխայ է մայրը պէտք է լողացնի։

Բ. Առաջ և նախաշար

ծաղկահատութիւն կամ ծաղկի պա-
տուաստումն. (օսուրիւանիթ)

Երեխային պատուաստել կարելի է եր-
կու ամսականից սկսած, թէև արքունա-
կան կրթարաններում պատուաստում են
երեք շաբաթականից սկսած։ Ո՞րքան շուտ
պատուաստուի երեխան, այնքան օդա-

կար է և լաւ։ Դակական ծաղկի տարա-
ծուելիս՝ չը պատուաստած երեխաններին
կարելի է պատուաստել և երեք շաբա-
թականից սկսած, վարուելով նոյն օրէնք-
ներով, ինչ օրէնքներով պատուաստում
են արքունական կրթարաններում։ Նա
է պատուաստել մեծերին գարնանը և աշ-
նանը, որովհետև այդ ժամանակներում,
օդը բարեխառն է. իսկ երեխաններին՝ ա-
մեն ժամանակ կարելի է պատուաստել,
միայն հարկաւոր է պահել նրանց բարե-
խառն օդում։ Երեխայի ատամների դուրս
գալու ժամանակ, այսինքն՝ երբ երեխայի
ստամոքսը կանոնաւոր չէ, լուծում է,
տաքութիւն է տալիս՝ այն ժամանակ
պէտք է սպասել չորս ամիս. որովհետև
նա տեսում է այդքան ժամանակ, որից
լետոյ ստամոքսը կանոնաւորում է ու
տաքութիւն պակասում և ատամները
դուրս գալիս, ապա կարելի է պատուաս-
տել. բայց իսկական ծաղկի տարածման
ժամանակ, չը պէտք է սպասել մինչեւ որ

ատամները գուշը գան, այլ պէտք է պա-
տուաստել:

Մայրերին խորհուրդ կը տամ չըթող-
նել ուրիշ երեխայից վերցրած հիւթով
պատուաստել իրանց երեխաներին, որնվ-
հետեւ կարող է պատահել, որ վարակիչ
հիւանդութեամբ հիւանդացած ելեխայից
վերցրած լինի հիւթը և պատուաստելիս
վարակի նրանց: Թէ և օրէնքով արգելուած
է երեխայից վերցրած ծազկաշիւթով պա-
տուաստելը, բայց ստորին դասակարգի
մարդիկ, ինչպէս օրինակ դալլաքները, ո-
րոնք գիտեն այս մասնագիտութեւնը վերց-
նում են երեխայից և պատուաստում մի
ուրիշին: Նատ բժիշկների կալծիքով՝ պա-
տուաստը իւը զօրութիւնը պահում է
7—8 տարի և աւելի բայց սրանից լե-
տոյ՝ արգեն կոլցնում է իւը զօրութիւ-
նը և պատուաստուածը եթէ կրկին ան-
գամ չը պատուաստուի, կարող է վարա-
կուել խակական ծազկով, որ և շատ ան-
գամ անվնասէ անցնում: Եթէ մի տան

մէջ երեխաներից մէկը վարակուեց իսկական ծաղկով՝ պէտք է բոլորին անխտիր, հիւանդին թէ առողջին պատուաստել և միայն իններորդ օրից լետոյ կարելի է ապահով մնալ, որ այլ ևս ոչ ոք պատուաստուածներից չէ կարող վարակուել իսկական ծաղկով։

Նոխ քան ծաղկի պատուաստելը պատուաստողը իւր ձեռների եղունգներ կը-
տըրտած պէտք է ունենայ, որպէս զի կեղտ չը լինի եղունգների արանքներում և ապա օճառով (սապոնով) մաքուր լուանալ։ Յետոյ պէտք է լուանալ պատուաս-
տուողի թեր կամ թերը Ա. գիշում լի-
շուած մտքուր ախտահանուչուն ջրով և
սրբի նոյն գլխում լիշուած իշխանաշ-
իտուն բամբակով։ Պէտք է բաց անի ծաղկահիւթը ածսծ ամանի երկու ծայ-
րերնել և ծաղկահիւթը ածի Ա. գլխում լիշուած ակօսաւոր ամանում։ Պատուաս-
տելիս պէտք է վերցնել ծաղկահիւթը ա-
մանից գործիքով կամ հենց գործիքի ա-

կոսում ածել շիշերից ծաղկահիւթը և ապա պատուաստել։ Պատուաստելու ժամանակ գործիքը այնպէս պէտք է բռնել աջ ձեռքով, ինչպէս բռնում ենք գրչակոթը գրելիս—երեք մատով։ Զախ ձեռքով պէտք է բռնել պատուաստուող երեխալի կամ տղամարդու թեկի (աջ կամ ձախ) ուսին կից մսալին մասը—մեծ մրկանը (дөлтобидная мышца) և ձգած պահճել մինչեւ պատուաստման գործողութեան վերջանաւը։

Այս բոլոր բաները պատրաստի ունենալուց յետոյ, պէտք է ծաղկահիւթով լի գործիքը, անցկացնել ուսից ներքեւ, իգա կան սեռին աւելի ներքեւ, վերնամաշկի միջով։ ակօսը վերև ուղղած։ Պատուաստելիս գործիքի ակօսի մի երրորդ մասը, հիւթով լի պէտք է մտցնէ պատուաստողի մաշկի մէջ և ոչ աւելի և ապա շուռ տայ մաշկի միջում, ալսինքն՝ ակօսը ներքեւ անէ, որպէս զի ակօսի մի երրորդ մասում եղած ծաղկա-

Հիւթը թափուի մաշկի մէջ և միախառնուի արեան հետ:

Այն պատճառաւ ակօսի միալն մի եր-
բորդ մասը պէտք է մտցնի մաշկի մէջ,
իսկ երկու երրորդը դուրսը պահի՝ որպէս
զի ակօսի ալդ երկու երրորդ մասում ե-
ղած ծաղկահիւթը փակի պատուաստի բե-
րանը, խտոնուելով մարմնից դուրս եկող
արեան հետ:

Այս գէպում պատուաստողը պէտք է
զգոյշ լինի, այսինքն՝ նաև երեխալի կազ-
մուածքին։ Արդեօք երեխան առողջ է
թէ նուազ կամ հիւանդ։ Եթէ երեխան
առողջ է և արիւնոտ, այսինքն՝ արիւն
շատ ունի, այն ժամանակ գործիքը այն-
պէս պէտք է անցկացնի մաշկի մէջ, որ
երեխան ոչինչ չը զգալ, նրան այնպէս
պէտք է թուալ, որպէս թէ ասեղով ծա-
կելիս լինեն։ Եւ այս գէպում արիւն
քիչ գուրս կը գալ. իսկ եթէ ատ դուքս
գալու լինի, այն ժամանակ անցքը պէտք
է փակել ծաղկահիւթով, նզրից մերզնե-


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԱԽ ՎԱՐԴԱՐԱԿԱՆ

լով գործիքով ծաղկահիւթը և քսելով
վերքի բերանին:

Եթէ պատուաստուղ երեխան նուազէ
և սակաւարիւն, այն ժամանակ թեք լուա-
նալիս, պատուաստելուց առաջ, այնքան
պէտք է քսէ պատուաստողը այդ երեխայի
թեւին բամբակով կամ չորկտորով, որ կար-
մըրի, արիւնը մի տեղ հաւաքուի և ապա
պատուաստէ վերև լիշուած ձեռվի։ Եթէ
հասակաւոր է պատուաստողը, պա-
տուաստելիս գործիքը աւելի խորը պէտք
է մտցնէ մաշկի մէջ, որին նա աւելի կա-
րող է գիմանալ։

Պէտք է պատուաստել աջ կամ ձախ
թեփ կամ երկու թեփ վրայ էլ ուզզա-
հայաց ձեռվ Յ—Յ տեղ, եռանկիւնաձե-
կամ խաչաձեւ։

Ա.Հա այս ձեռվ



Որովհետեւ մեր ժողովրդի մէջ սովորութիւնը չը կալ և պաշտօնապէս էլ չէ հրամայուած կրկնապատռափութելը, ուստի առաջին տնգամ պատուաստելիս հարկէ երկու թեր վրայ էլ պատռւաստել Յ—Յ տեղ որով աւելի երկար ժամանակ ապահով կը լինի ծաղկից վարակուելու:

Նատերը՝ ոչ պատուաստուած են լինուած և ոչ վարակւուած են իսկական ծաղկավ և այս բանը պէտք է վերագրել այն բանին, որ նրանց կազմուած քը տրամադրի չէ, այսինքն՝ չէ տրամադրուած ընդունելու արդ հիւանդութիւնը:

Պատուաստուած տեղերը այնքան հեռու պէտք է լինեն իրարից, որ հասունութեան և կատարելութեան հասած ժամանակ իրար հետ չըմիանան և չ'ունչեն ու աւելի ցաւ չը պատճառեն երեխալինին: Ասկ եթէ պատուաստողի անզգուշութիւնից պատուաստի վերքերը իրար հետ միանան և ուոչեն, այն ժամանակ պէտքէ քսել սովորութելուն—բելի վազելին

(ԾԵԼՅԱՅ ՎԱԶԵԼԻՆԻ) մազը օրը 2—3 անգամ և ուռուցքը կընստի։ Եւ որպէս զի երեխան չըքորի պատուաստած տեղերը, արիւնը չը դուրս գայ և ցաւը չը նորոգուի, հարկաւոր է որ պատուաստուած թեերի վրայ փաթաթել Խռնտաշտական բաժբակ և կապել, այն ժամանակ ինչքան երեխան աշխատի քորել, չի կարող վնաս տալ վերքերին։

Նատ երեխաների անհանգստութիւնից և թեր շարժելուց, թեի տակը գոյանում են խուլեր, որոնց սպիտակ վազելին քսելով՝ կը կարչեն։

Վերոյիշեալ գործողութիւնը կոչւում է ծաշկահափութիւն կամ ծաշկի պափուաստուն, իսկ վէրքը՝ պափուաստ։

Պատուաստելուց յետոյ պատուաստած թեր պէտք է ազատ պահուի որևիցէ առարկայի քսուելուց, որպէս զի հիւթը չը սըբուի։ Պատուաստի չորանալու համար հարկաւոր է ամենաքիչ $\frac{1}{2}$ ժամ։ Եթէ պատուաստողը երեխայ է՝ նրա մօ-

ըլ պէտք է պատուիրել լողացնելու նը-
րան, պատուաստուելու հետեւալ և եր-
բորդ օրուայ երեկոները. իսկ եթէ պա-
տուաստուողը հասակաւոր է՝ պատուիրել
բամբակով վերցնել սովորական սենեակի
ջուրը և մզել պատուաստուած թերի
վրայ ու լետոյ չորացնել չոր բամբակով:
Այս միջոցը օգտակար է այն պատճառով,
որ նախ՝ մաքուր լինելուց՝ կեզտոտութիւ-
նը չի մտնի պատուաստի մէջ հիւթի հետ
միասին: Երկրորդ՝ լողացնելը կամ լուա-
նալը զօրելացնում է պատուաստը և ա-
ւելի հասունացնում ու պարարտացնում
և ոլժ տալիս աւելի շուտ երևալուն:

Պատուաստի տեսզութիւնը մինչև ըս-
լորովին լաւանալը՝ բաժանւում է չորս
շրջանի: որոնք ունեն առանձին առան-
ձին անուններ:

I. Ծ. Ը. Ա. Ն.

Պատուաստելուց յետոյ անցնում է երեք
կամ չորս օր և կարծես թէ պատուաս-

տուած անձի պատրւաստած տեղերում
ոչինչ չէ երկում։ Այս ժամանակամիջոցը
կոչում է՝ ԱնՅԱՅՏ ԴՐԱՒԹԻՒՆ (Скрытое
ное состояніе) և տեսում է 1—4 օր։

II ԾՐ ՃԱՆ

Պատրւաստուած անձը երրորդ կամ
չորրորդ օրը տաքութիւն է ունենում։
Պատրւաստուած տեղերում երկում են
մանր բշտիկներ, որոնք հասնելու են ի-
րանց կատարելութեանը։ Այստեղ հոբ-
կաւոր եմ համարում առել, որ շատ երե-
խաների, որոնց մարմինը աւելի տրամա-
դրուած է (ընդունակ է) ընդունելու զա-
նազան հիւանդութիւններ, բշտիկների
երեալու հետ միասին, ամբողջ կուրծքին
և թեերի տակ գուրս են զալիս կարմը-
րագոյն մանր բշտիկներ։ որոնցից պէտք
չէ վախենալ, որովհետեւ մի քանի օրից
յետու իրանց իրանց անյատանում են։
Բշտիկը չորրորդ օրը՝ դառնում է քորոցի
գլխի շափ։ Հինգերորդ օրը՝ բշտիկը մե-

ծանում է և թողնում իր միջում ակօս
կոմ խորութիւն, շուրջը կարմրում է լուս-
նի շրջանակի պէս։ Աեցերորդ օրը՝ կրկին
մեծանում է թէ բշտիկը և թէ շրջանա-
կաձև կարմրութիւնը և երեսում է սպի-
տակագոյն թարախը։ Այս միջոցում կա-
մաց կամաց շատանում է տաքութիւնը։
Այս ժամանակամիջոցը կոչվում է ԴՈՒՐԱ
ՏԱԼՔ (Высыпаніе) և տեսմ է 4-7
օրը։

III Շ Ր Ճ Ա Ն

Եօթներորդ օրը՝ պատուաստը մեծա-
նում է, թարախը աւելանում և շրջա-
նակաձև կարմրութիւնը շատանում ու
պնդանում։ Ութերորդ օրը՝ թարախը ա-
ւելանում ու շատանում է, կարմրութիւ-
նը նորսպէս աւելանում ու տարս ծուռ
տրեխ շողբերի նման։ Իններորդ օրը՝ թա-
րախը հասնում է իւր կատարելութեանը,
սկատուաստը մեծանում և դեղնանում է,
կարմրութիւնը պակասում և կամաց կա-

մաց փափկում ու շուրջը սկսում է չորանայք: Այս ժամանակամիջոցը կոչվում է ԼՔՅՅԱՆ (Ալիվանիք) ժամանակամիջոցը և տեսում է 7—10 օր:

IV ՇՐՋԱՆ

Տասներորդ օրը՝ պատուաստը հասնում է իւր կատարելութեան, մեծութեան և զօրութեան: Այն օրը պատուաստուածը ունենում է սաստիկ տաքութիւն, անհաճելի ցաւ, ձեռքի ծանրութիւն, կորցնում է ուտելու ախորժակը, երբեմն փորը կապւում է և գլխացաւ է ստանում: Այս բոլորը տեսում է 12—24 ժամ: Վերելիշուած շրջաններում (I, II, III) տաքութիւնը կտամաց կամաց աւելանում է. իսկ այս չորրորդ շրջանի տռաջին օրը, այսինքն՝ տասներորդ օրը տաքութիւնը սաստկանում է և 12—24 ժամ տեսելով՝ լանկարծ պակասում է և պատուաստուած երեխան թեթևանում է ցաւից ու տաքութիւնից, կրկին ստանում է ուտելու

ախորժակ և ձեռքի ցաւը թեթևանում է:

Սաստիկ տաքութեան և փորկապութեան ժամանակ, լաւ է տալ երեխային իտշըռէշից — Ուզանդից պատրաստած օշարակ (շարբաթ) օրը 2—3 անգամ թէի գդալով փորը փափուկ պահելու համար:

Խաշընդեղի օշարակը (ревенный сиропъ) կարելի գտնել ամեն դեղատներում:

11, 12, 13—15. րդ օրը պատուաստի թարախը կարծրանում է, չորանում ու վայր ընկնում: Առաջին անգամ վայր է ընկնում մինչև 16. րդ օրը և երկրորդ անգամ 16—28. րդ օրը, թողնելով հետք, որը և շատ անգամ մնում է մինչև մահը: Այս հետքը դեռ մգագոյն է լինում, որ և զանազանուում է իսկական վերնամաշկից և մի քանի ամսից լետոյ դառնում է նոյն գոյնի, ինչ գոյնի է վերնամաշկը:

Ետատ անգամ ուշանում է չորրորդ շըլցանի ժամանակամիջոցը: Այս ժամանա-

կամիջոցը կոչւմ է ԶՈՐԱՅՈՒՄՆ (զասի-
խանիք) և տեսմ է 10 – 28-րդ օր և հր-
բեմն աւելի ուշ:

Պատուաստուածի մօրը պէտք է պա-
տուիրել, որ վերև լիշտած շրջանների
ժամանակամիջոցնելում երեխային հագ-
ցընէ լայն թեատր շապիկ, մանաւանդ
տղայոցը: Եթէ օրօրոցումն է պառկեց-
նում՝ պատուիրել, որ ուժգին չը կապէ
կապանը, աշխատէ հեռու պահել պա-
տուաստուած թեը մի որեէ բանի ընդ-
հարումից - քսուելուց: Պէտք է աշխատի
չը մըսեցնել, շուտ շուտ փոխել շապիկը:
Հասակաւոր՝ պատուաստուածը նոյն զգու-
շութիւնները պէտք է ունենալ, մինչև
պատուաստի լաւանալը: Երբեմն պա-
տուաստուած երեխան՝ միայն սակաւ
տաքսւթիւն է ունենում: իսկ պատուաս-
տը երեսում և այսպէս անցնում է
անհետեանք: Պատճառը՝ երբեմն ցըր-
տութիւնն է լինում, երբեմն էլ հիւթի
անպէտքութիւն ու անզօրա թիւնը: Ուս

դէպօւմ պէտք է կրկնել առաջին պատուաստումը, միայն Յ շաբաթից յետոյ, միւս թեկի վրայ եթէ մի թեկի վրայ էք պատուաստել. իսկ եթէ երկուսի վրայէք պատուաստել, այն ժամանակ կարելի է նոյն թեկերի վրայ պատուաստել: Եթէ կը րկինանգամ պատուաստելուց յետոյ էլ չերեւայ, այդ պէտք է վերագրել այն բանին, որ կամ էլի հիւթը յաւ չէ եղել. կամ թէ չէ երեխայի կամ պատուաստուող տնձի մարմինը տրամադրուած չէ այդ հիւանդութեանը, այսինքն՝ չի վարակուի իսկական ծաղկով: Երբեմն երեխան իւր մօր տրգանգում եղած ժամանակն է վարակում իսկական ծաղկով և ծնուելուց յետոյ բշտիկները լաւացած են լինում և հետքեր երեսում կամ այն էլ չէ երեսում: Երբեմն էլ ծնուելիս բշտիկնորովէ ծնուում ու յետոյ լաւանում բշտիկները, ընկնում ու հետքեր թողնում:

Գ.

Կրկնապատուաստումն (Ревакцинація)

Որովհետեւ՝ ինչպէս սկզբում ասացինք,
պատուաստուած անձը 7—8 տարուց լեռ
տոյ կարող է նոյնպէս վարակուել իօկա
կան ծաղկով, այս պատճառով աչքի ա-
ռաջ ունենալով ալդ վնասը՝ կրկնապա-
տուաստումն են կատարում, որը տարա-
բախտաբար օրէնքով պարտադիր չէ:

Կրկնապատուաստում են նրանց, որոնք
առաջին անգամ պատուաստուել են և,
կանոնաւոր ընթացք է ունեցել առաջին
պատուաստումն:

Նոյնպէս կատարւում է և՝ կրկնապա-
տուաստումը, ինչպէս առաջինը, միայն
5—6 օրուայ միջոցում տաքութիւն է
ունենում, գուրս է տալիս մանր քո-
րոցի գլխի չափ և լքցւում ու չորանում
հետք չը թողնելով:

Օդտակար է միշտ երեխային պատուաս-


տել 3—4 տարի մի անգամ, որովհետև
երկիւղ չի ունենայ կրկին անգամ վարա-
կուելու իսկական ծաղկով։ Եթէ հակա-
ռակ դէպքում, իսկական ծաղկի շատու-
թեան և վնասակարութեան միջոցումն,
վարակուիէլ կրկնապատուաստուածը, ան-
վնաս է և թէթև կանցնի և ուրիշ ան-
գամն էլ, չի վարակուի իսկական ծաղկով։
Նկատուած է, որ ինչքան ուշ վարակուի
մարդս իսկական ծաղկով, այնքան վնա-
սակար է և մահացու։

Այն գաւառացի եղբայրներիս, որոնք
պարապում են կամ կը պարապեն այս
մասնագիտութեամբ, խորհուրդ կը տայի
ձեռք բերել նոր ստացուած վերջին տե-
սակի ակօսաւոր գործիքները (Ланце-
ты), Տիֆլիսъ Кавк. Т-ва Торг.
Апт. Тов. уг. Гановск. и сололакс.
ул. складъ тогоже товориш. на
теат. ул. собст. домъ. отдѣл. скла-
да Мих. пр. № 101.

Խակ հորթից ստացուած թարմ ծաղկա-
հեթը՝ (Լիմօա) կարելի է ձեռք բերել
բժ. Աթանազինէ Գաբրիէլեան Մելքոն
մեանցի մօտ (Առնացեն Գօվ. Մել-
կոմով յ. Անդրեև, և Մելիկօվ.
յլ. № 7—8. և բժ. Պրօզօրովսկու մօտ
(докт. Алекс. Алекс. Прозоровс-
кій Головинск. проспектъ № 33 д.
Тамамшева.

Գործիքները ծախւում են զանազան
գներով իսկ ծաղկահեթը, ապակեալ իսո-
զովակաձև շիշերում ածած՝ հատը 10 կո-
պէկ, 12 կ. 15 կոպ. և աւելի, նախած
շիշ (трубочка) մեծութեանը:

Վ Ե Ր Զ



3792

ՎԱՃԱՌԻՈՒՄ Է

Կովկասեան և Կենտրոնական գրավա-
ճառանոցներում և հեղինակի մօտ. Հաւ-
լաբար՝ Տուչկովսկայեա փող., № 33:

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊԵԿ